



ԵՐԿ-ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

TO ADVERTISERS.
This paper has an extensive circulation among the Armenians throughout the United States and the principal cities of the world. It is an excellent medium for domestic and international advertisements, securing the very best results.
Rates of advertising will be found on the fourth page.

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԿՈՍՏԱՆՆՈՒՊՈԼԻՍ
ESTABLISHED AT CONSTANTINOPLE 1869.

ՆՈՒ ԵՐԿ, ՀԻՆԳՇԱՐԹԻ, ՅՈՒՆԻՎԱՐ 15
NEW YORK, THURSDAY, JANUARY 15 1891-

ՆՈՐ ՀԱՏՈՐ Ա. ԹԻԻ
W VOLUME I. NO. 2

ԱԶԳ

Եկեղեցական եւ գեղութեան
գործերու վերաբերեալ Հայերէն լեզ-
ուաւ ծանուցմունք, որը երկու մաս-
նաձախէ աւելի տեղ չեն բռներ,
մերթիւմ մէջ ձրի պիտի նրատարակ-
ուին:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ՈՒ ԶԱՓԱԹԱՐ ՍԲ. ԵԿԵՂԵՑԻ

St. Chrysostom's Chapel,
[Trinity Parish.]
Corner 39th Street and 7th Avenue.

Ի գիտութիւն բարեպաշտ ժողո-
վրդէան կը ծանուցուի որ առաւօտ-
եան ժամերգութիւն կը կատարուի ի
վերայիշեալ Մատրան, ամէն Կիրակի
ժամը 1.30 ին յետ միջառուր:

Ի Դիմաց Հոգաբարձութեան,
Հ. ԵԿԵՂԵՑԻ, Փ Մ.ԱՅՎԱԴ,
Բարտուղար: Ատենապետ:

ՄԱՍՆԱԻՈՐ

ԵՒ ՆՈՒՅՈՒՄ

Հայաստանեայց եկեղեցւոյ Հո-
գաբարձութիւնն պատիւ ունի
ծանուցանել որ Արժ. Յովսէփ Վ.
Սարգսեան, Ս. Մկրտումեան
առթիւ Հանդիսաւոր Ս. Պատա-
րագ. պիտի մատուցանէ ի վեր-
այիշեալ Մատրան, Կիրակի,
Յունվար 25, ժամը 1.30 ր. Վ.
Ժամերգութիւնն պիտի սկսի
ժամը 1ին:

ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ
Ի ՆՈՒ ԵՐԿ.

Ընթերցող,

ՀՐԱՆՏ ՄԵՍՐՈՊ ԳԻՐԵՉՅԱՆ.

Յառաջիկայ Կիրակի, ի ժամ 2.30
յետ միջառուր, ի Կրկն Մատրան
(Պրոտոէն և Տասներորդ փողոց)
կրօնական Պաշտամունք պիտի կա-
տարուի Հայ լեզուաւ, ըստ գրու-
թեան Անգղիական եկեղեցւոյն:

Յարգանքով կը հրաւիրուին ամէն
Հայք ներկայ գտնուիլ և մասնակի-
ցիլ սոյն Պաշտամունք:

ՆԵՒՏՈՆ ՄԵՍՐՈՊ ՊՈՅԱՃԵԱՆ
Բարտուղար:

ՍՈՒՐԲ ԲԱՐԹՈՒՂԻՄԵՆՈՍԻ

ԱՆԳՂ. ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆԲ

ՅՆԻՔԻՓԻՆԵԿԵԼԵՆՈՂ:

47րդ փողոց, Լէզարիկթըն եւ
Բարք Ավելի ներու միջոցով,
Պաշտօնեայ—Արք. Յովհաննէսեան.
Դասախօսութիւնն կսկսի, յետ մի-
ջառուր, ժամը 3ին, եւ կրօնական
Պաշտամունքն՝ ժամը չորսին,
Կիրակի օրեր:

ԱԶԳ

Նիւ Երբքի Հայաստանեայց եկե-
ղեցւոյ Հոգաբարձութիւնն պատիւ
ունի ծանուցանել արգոյ հասարա-
կութեան, որ եկեղեցական երաժշ-
տութեան վարժութիւնը տեղի կու-
նենան ամէն Հինգշաբթի գիշեր ի
ժամ 7.30, Ս. Ոսկերեան Մատ-
րան սրահին մէջ, Ուստի Յօգ. Փողոցի
և 7րդ Ավելի անկիւն, Սրահին
գուռը 7րդ Ավելի վրայ է:
Ամէն ազգայինք սիրով կը հրա-
ւիրուին ներկայ գտնուիլ:

ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՒ

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ

Սոյն վերնագրով հետեւեալ
յօդուածը Ֆիլատէլֆիոյ Բիւսմէյ-
քը հանդէսին մէջ կը կարգաւոր,
Մր. Բուպէրտ Սթայնէ գրուած:

«Որչափ հետամտութեամբ փնտ-
ռուի Բիւսմէյքը վերջի թուոյն մէջ,
Հայաստանի անունը չի գտնուիլ:
Ասի մասամբ զարմանալի բան մ'է:
Նկատելով որ արաբական մէջ պատա-
հած դէպքերը Հայկական խնդիրը
նշանաւոր ըրած են իբր յետագայ
պատերազմի մը ամենահաւանական
պատճառ: Հայերը Բիւսմէյքէն
ազգ մի են որք իրենց հաւատքը
պահպանելու դարերէ ի վեր նմանը չի
ստացած հաւանքէ ետեւ. նախ կրա-
կապաշտներէ յետոյ Մահմետական-
ներէ: Սոքա Արարատ լեռան շրջա-
կայները կը բնակին, և իրենց երկի-
րը բաժնուած է Ռուսիոյ, Պարսկաս-
տանի և Թուրքիոյ միջև, երևութիւն
իտալացիներու կը նմանին, թերեւս
սակաւ ինչ գեղեցիկագոյն և երբեմն
ալ չի տեսիլ հերպոլի հրապուրիչ,
Նշանաւոր եղած են իրենց վաճառա-
կանական կայողութեամբը, ընտա-
նական կենաց սրբութեամբը, չա-
փութեամբը և ուսանելու փափակովը:
Նուրբ և մշակեալ լեզու մը կը խօսին
մերթիւմ նման, որ կերպով մը կապա-
ցուցանէ թէ թէ տղա մեր մերձա-
ւոր արեւելիկներն են:

«Թուրքիոյ մէջ Հայոց թիւը եր-
կուց ու կէս միլիոնի չափ է, և սո-
ցա վիճակն է որ «Հայկական խնդի-
րը» կը գոյացնէ: Ոչ սակաւ Սուլ-
թաններ, ներկայն ալ մէջը հաշուե-
լով, առ երևութիւն բարի գիտումով
Միւսլիմաններու և Բիւսմէյքէն հա-
ւասարութիւն հռչակած են: Բայց
այս տեսակ խոստումներու որչափ
արժէք կարենալ կցուիլ սա բանե-
րէն կրնայ դատուիլ որ Լիբանանի,
Կրէտէի, Պոնտիայի և Պաւլարիոյ
շարքերը այս հրովարտական հրատա-
րակումէն ետքը տեղի ունեցան, և
մեծաւ մասամբ կանտնաւոր զօրաց
գործերն էին: Հայաստանի ներկայ
վիճակը 1876ին Պաւլարիոյ վիճակին
պէս է: Ձեռքէ զ Բիւսմէյքէն թափա-
ռիկ գեղերը երկրին ամէն կողմը կը
շրջագային և առանց պատժուելու
ժողովուրդը կը կողպուեն, կիներն և
մանուկները կը տանին և մարդերը
կը մեռնեն: Թրքական պաշտօնեայ-
ները շատ քիչ կամ ոչինչ կընեն այս
հարստահարութիւնները արգելելու
համար: մասամբ, որովհետեւ անկա-
րող են և մասամբ, կըսուի թէ,
որովհետեւ սոյն աւազակներուն գոր-
ծողից են:

«Պաւլարական անգլիկութեանց
ծաղուած յայտնի է: Թուրքերը
Բիւսմէյքէն անգլիկութեան ապա-
րինելով, մերժեցին որ և է Եւրոպա-
կան միջամտութիւն հարստահարեալ
Բիւսմէյքէն նկատմամբ: Վասնորոյ
Ռուսիա, որ տարի մը շարունակ ան-
գլիկ զայրոյթով իւրեանց քրիս-
տոնեայ եղբարք շարքն դիտած էր,
իւր ժողովուրդեան ձայնին անսալով,

Թուրքիոյ դէմ, պատերազմ հրատա-
րակեց: Այս պատերազմին գիշեր
եղաւ Ռուսիոյ իբր եօթն հարիւր և
երեսուն միլիոն տօլար, և իննսուն
և ութն հազար հոգիներ, բայց Եւ-
րոպայի Բիւսմէյքէն մեծ մասը և Ա-
սիոյ մէջ իբր չորս հարիւր հազար հո-
գիներ անհաւատին լուծէն ազատ-
ուեցան:

«Որչափ որ քաղաքագիտօրէն
կրնայ նախատեսուիլ, սա յայտնի
բան է որ Ռուսիա Հայաստանը իրեն
կցելու փափագ մը չունի: Բայց կր-
նայ ըլլալ որ Ռուսական Կառավա-
րութիւնը իւր ժողովուրդէն ստիպ-
ուի ի Հայաստան միջամտել: Ինչպէս
որ ստիպուեցաւ միջամտել ի Պոլս
կարիւս:

«Հայերը թէ և Պաւլարներէ ա-
ւելի հեռու բայց տակաւին Ռուսի-
ոյ մէջ լեզուաւ և կրօնքով եղբայր-
ներ ունին: Ի Հայաստան միջամտու-
թիւն այնչափ վտանգաւոր ալ չէ,
որովհետեւ Աւստրիոյ ինչպէս նաեւ
Գերմանիոյ և Իտալիոյ շահերը վը-
տանգի չեն ենթարկուիլ: Գաղղիա՝
Ռուսիոյ բարեկամութիւնն չի պիտի
ուզէ կորսնցնել, Բիւսմէյքէն ժողո-
վուրդ մը Թրքական վարչութեան
ներքէ պահելու համար: Այսպէսով
չի կրնա պատճառ մը որ Ռուսիոյ ի Հա-
յաստան արշաւելու արգելք ըլլայ,
բայց ի Բիւսմէյքէն ընդգրկուեց-
նէ: Կրնայ վայրկեան մը հասնիլ որ
այդ վայրը անգլիկ զայրոյթի առջև
ենթադրեալ, և այն ատեն Ռուս
պատերազմ մը ևս պիտի պայթի,
որուն ելքը մէկը չի կրնար նախա-
տեսուիլ, բայց որուն հաւանականու-
թեանց վրայ խորհիլն մէկու մը սոս
կում կը պատճառէ:

«Այս անձուկ պարագային մէջ
խաղաղութեան բարեկամները ինչ
կրնան ընել: Առաջին բան, կը թը-
ռուի թէ, Հայոց պահանջմանը անսալ
է: Այս պահանջմունքը խղճաւոր չափ
չափաւոր են: Անկախ ըլլալ չեն խն-
դեր: Ութն դարերէ ի վեր Թրքե-
րէ անգլիկութեան հաւանութիւն
զարծեալ կամ ունին Թրքական հը-
պատակ մնալու: Միայն կուզեն ըն-
տրեալ ժողով մը ունենալ իրենց
ծախքերը քննելու, Հայ կամ Եւ-
րոպացի կառավարիչ մը՝ Սուլթա-
նէն կարգուած, և կ'երաշխտուորեն
Հայկական եկամտից հարկերն ըր-
ած վճարել: Բայց մինչև իսկ այս
(որչափ ջնջին պէտք է երևայ Ա-
մերիկացոյ մը աչքին), չէ՛ թէ իբր
պահանջմունք յառաջ կը բերեն, ալ
իբր փափագ մը: Իրենց պահանջը
Պէրլինի դաշնագրութեան Յօդ. 10-
ուածն է:

«Բ. Դուռը պարտ կ'ստանան
առանց յապաղման իրականացնել,
Հայերէ բնականաւ գաւառներու մէջ
տեղական պիտոյից պահանջած բար-
ւոգումները եւ բարեկարգութիւն-
ները եւ երաշխաւորել նոցա ապա-
նովութիւնը Ձեռքէ գնելու եւ Բիւս-
մէյքէն Տէրութեանց այս նպատակաւ
անուած ըլլալը, որը նոցա գոր-
ծադրութեան պիտի հսկեն: »

«Ի վերջոյ այդ յօդուածին ման-
րամանութիւնը Տէրութիւններուն
կողմէն աւելի յստակօրէն բա-

ցատրուեցաւ: Թրքական Կառավա-
րութիւնը Հայաստանը բարեկարգե-
լու ծրագիր մը պատրաստած էր,
որոյ գլխաւոր կէտերն էին, Բիւս-
մէյքէն Կառավարիչ մը. նահանգին
մանր գաւառներու բաժանումը, ո-
րոց կառավարիչները պիտի ըլլային
Մահմետական կամ Բիւսմէյքէն տե-
ղայն ժողովուրդեան մեծամասնու-
թեան համեմատ: Կառավարիչը եթէ
Մահմետական ըլլար երկու Բիւս-
մէյքէն օգնականներ պիտի ունե-
նար. եթէ Բիւսմէյքէն երկու Մահ-
մետական: Երկու դատարաններ մաս
մը գաւառացի համար եւ իւրաքանչ-
իւր գաւառի մէջ ոստիկանութիւն
մը՝ որ վեց մարդէ բաղկանայ, որոց
չորսն Բիւսմէյքէն պիտի ըլլար, ե-
թէ մեծամասնութիւնը Բիւսմէյքէն
ըլլար: և չորսը Մահմետական՝ եթէ
մեծամասնութիւնը Մահմետական:

«Տէրութիւնները, Մր. Կոչն-
նի միջոցաւ 1880 Սեպտեմբեր 7ին
հաւաքական ծանուցագիր մը մատու-
ցին: Ասի Ապրիլտին Բաշայի յայ-
տարարութիւնը շրջեց թէ Կառավա-
րութիւնը արդէն բարեկարգութեան
գործը սկսած էր: և ծրագրեալ
բարեկարգութիւնները քննադատե-
լէ ետեւ յայտարարեց թէ դռն
փափագուած արգելքն յառաջ բե-
րելու անբաւական էին, և թէ ապա-
կեղծրոնցաման և կրօնական հաւա-
սարութեան սկզբանց ալ աւելի իրա-
կանացումը, լուսաբոյն ոստիկա-
նութեան մը կազմակերպութիւնը,
աւելի գործնական պաշտպանութիւն
Բիւսմէյքէն, և ընդհանուր-կառա-
վարիչներու պաշտօնից նկատմամբ
առաւել յստակ արամադրութիւններ
միայն կրնային գոհացնել Պէրլինի
դաշնագրին Յօդ. 10-ուածէն ծա-
ղուած անձ իրաւունքները և ակն-
կալութիւնները:

Սորա սինակները եզակեանա-
բար չափաւոր, թերեւ իւր չափա-
ւորութեան մէջ ամենաճարտար,
նշանաւոր գրչով մը լեցուած են:
ասի Պէրլինի վեհաժողովին նիս-
կին—պատուիրակ Մր. մինաս Չերա-
զի գրիչն է: Հսկող աչքով մը աշ-
խարհը դիտելով ամէն պատեհու-
թիւն չի փախցնել իւր ազգին պա-
հանջմանց ուղարկութիւն հրաւի-
րելու:

«Դժուարին է տեսնել թէ ինչ
պատճառներ կրնայ ցուցուիլ այս
պահանջմանց չի տրուելուն համար,
բայց եթէ Թրքաց աւանդական քաղա-
քականութիւնը սա եղած ըլլալ թէ,
Բիւսմէյքէն Կառավարիչ իրենց մի-
տնջնական որսերն պէտք է ըլլան:
Եթէ ինքնապաշտօնեան Միւսմէյքէն
իւր օրէ ըստ օրէ մեծցող ազդեցու-
թիւնը գործածէ այս պահանջմունք-
ները ձեռք բերելու համար, ներ-
կայիս ամէնէն սպառնացող պատե-
րագրի ամպը փարատած կ'ըլլայ, և
թերեւ Արեւելեան խնդիրը կը լուծէ:

* Տէս Արդընի Տարեկան Շաբ-
արան 1880, Ե. 889:

ՄԵՐ ՈՒՋԱԾԸ

-ԵՐԿՐԱԳ ՈՒՆՏԸ-

ՉԷ

ԵՒ ՈՉ ԾՈՎՈՒՆ ՄԷՋԻ.

ԱՄԵՆ ՁՈՒԿԵՐԸ

Այլ միայն Ձեր ԱՐԱՐԱՏԻ բա-

ժանորդ գրուիլն. որ ամենաչնչին
գումարով մը կը լայն. եւ ԴՈՒՐ
կրնաք այս բանը ընել որչափ որ
ձեռք ուրիշները կրնան:

Եթէ ԱՐԱՐԱՏԻ վերստին լայն
ընծայմանը դէմ մասնաւոր առաք-
կութիւն մը չունիք, թող Ձեռք
իմանաք Ձեր հրամանով հանդերձ:

Թէ ինչու գրուելու էք ԱՐԱ-
ՐԱՏԻ բաժանորդ:

Որովհետեւ ԱՐԱՐԱՏ ձեզ ծառայեց:

Որովհետեւ ԱՐԱՐԱՏ ձեզ պիտի ծա-
ռայէ:

Որովհետեւ ԱՐԱՐԱՏ աներկիկ է:

Որովհետեւ ԱՐԱՐԱՏ անկողմնակալ է:

Որովհետեւ ԱՐԱՐԱՏ ամէնուր բարե-
կամ է:

Որովհետեւ ԱՐԱՐԱՏ պէտք է հրա-
տարակուի:

Որովհետեւ ԱՐԱՐԱՏ եկած է մնալու:

Եթե Ձեր գորաւոր կէտեր. և այս
եօթն կէտերուն իւրաքանչիւրը բա-
ւական ըլլալու է մեր ամէն Հայրե-
նակիցներն համոզելու որ ԱՐԱՐԱՏ
անհրաժեշտ պէտք մ'է:

Կամ թէ աւելի պարզ հարցում
մը: Պատշաճ է որ օրական ԿԵՍ
ՍԵՆԹԻ չափ ընթերցասիրութեան
և կամագրային օգտակար ձեռնար-
կի մը յատկացնէք. և կամ կարող էք
այդ շամանդաղային գումարը ձեր
օրական ծախքէն խնայել:

Եթէ առ այս ձեր պատասխանն
է, այո՛, հաճեցէ՛ք զրկել Ձեր անու-
նը և հասցէն առ

The ARARAD,
No. 100 Centre St.,
NEW YORK.

Ա Ր Ա Ր Ա Տ

Կը հրատարակուի երկու շաբաթը անգամ մը, չինգշաբթի օրեր:

Խմբագիր եւ Տէր,
ՓԱՌՆԱԿ ՄԱՏԹԵՆՍ ԱՅՎԱՏԵԱՆ:

ՊԱՏՄԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ
(Բաժնի տուրքէ ազատ)
Միացեալ Նահանգաց Համար,
Մէկ տարեկան 2 տոլար,
Կէս 1
Օտար երկիրներու համար,
Մէկ տարեկան 12 շիլլին,
Կէս 6

Բաժանորդագիրք կանխիկ վճարելի են: Եւ կրնան յղուիլ փոխանակագրով, Բոսթօն կամ Էքսթրէմի քաղաքի հրատարակութեան, այլ փոստահրութեան համար:

Թղթակիցներէ կը խնդրուի իւրեանց ստանձնած հրատարակային անուան հետ բուն անուններն ալ խմբագրութեանս գրասենիւ, չէ՛ թէ հրատարակութեան, այլ փոստահրութեան համար:

Ձի հրատարակուած գրութիւնք ետ չեն գարձուիր որ եւ պարագայի ներքեւ:

Ուղղել ամեն գրութիւնք առ
THE ARARAI,
No. 100 Centre Street,
NEW YORK.

ՆՈՒԻ ԵՈՐԹ, ԵՇ., ՅՈՒՆՎԱՐ 15:

ԿՈՐԵԻՈՐ ԾԱՆՈՒՅՈՒՄ:

Յարգանք կը խնդրուի այն ամէն ազգայիններէն որք թերթիս բաժանորդ գրուելու կամ քերթին յայտնած են եւ կամ կը փափաքին բաժանորդ գրուելով զանի շարունակ ընդունիլ, իւրեանց բաժանորդագրները խմբագրութեանս հասցնել բարեհաճին:

ԱՌԸԹԵՐՅՈՂՄ:

Թերթիս մագրութիւնն կը փութայ իւր արգոյ ընթերցողաց ներողամտութիւնն խնդրել այնպիսի տպագրական թերութեանց համար որք մեր առաջին թուոյն մէջ տեսնուեցան եւ թերեւս երկրորդին մէջ ալ պատահին: Պարտ կը համարիմք աստ յայտարարել որ այն թերութիւնք հակառակ մեր ամէն շանից անխուսաբելի եղած են, թերթիս տպագրարար Պր. Հ. Էլիինեանի իւրապարանի վրայ ըրած ընդարձակ յաւելմանց եւ կարգադրութեանց տակաւին աւարտած չըլլալուն համար: Այսու հանդերձ կը հաւատտեմք մեր սիրելի ընթերցողները որ ԱՐԱՐԱՏԻ յառաջիկայ թուէն սկսեալ պիտի կարողանան զանի նոր տառերով տպուած եւ տպագրական թերութիւններէ ըստ կարելոյն ազատ տեսնել:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ ԵԿԵՂԵՑԻ ՅՈՒՄԱՐ:

Ինչպէս կը տեսնուի ուրիշ սինակի մը մէջ Ուսղբի Հայկական Եկեղեցւոյ Պատ. Հոգաբարձութեան հրաւերէն, յիշեալ նորաշէն Եկեղեցւոյ բացման և օծման նուիրական հանգէսը կը կատարուի յառաջիկայ Կիրակէ օր: Յուշով մը որ ամէն Ամերիկեան Հայեր արտաքոյ կարգի

լանք մը պիտի ընեն այս առթիւ ուխտագնացութիւն մը ընել և սոյն հանդիսին ներկայ գտնուիլ: Գիտարարուի թիւեր յաճախ չեն ներկայանար մեզ մեր վաղեմի և անխախտ եկեղեցւոյ փառքը վաշելու, և փոխադարձաբար մեր ներկայութեամբը զանի փառաւորելու:

Ի շնորհս եր մէջ երթեւեկութեան դիւրութեանց, տեղոյս ազգայինք ևս կրնան Ուսղբը երթալ առանց իրենց անձնական շահուց ժամանակէն զոհողութիւն մը ընել պարտաւորելու: ՍԹՈՆՆԻԿԸՆ Լայնի շոգենաւք Գանալ փողոցի ծայրին մօտ Նորթ Ռիվերի թիւ 36 նաւահանգիստէն կը մեկնին երեկոյեան ժամը 4. 30 ին, և ի նիւու Լոնտըն երկաթուղւոյ կցուելով Ուսղբը կը հասնուի հետեւեալ առաւօտուն: Նաե կան Նորուիչ Լայնի շոգենաւք, որք նոյն գետին վրայ թիւ 40 նաւահանգիստէն կը մեկնին մի և նոյն ժամուն:

Շաբաթ գիշեր ուշ առեւ երթալ ուղղը կրնան Գառաւուն և Երկրորդ փողոցի կայարանէն Պոսթօն: Էքսթրէմ շոգենաւքն առնել որ կը մեկնի ժամը գիշերուան 11 ին: Նաւով փոխադրութեան գինն է իւր 2 տոլար, իսկ շոգենաւքով 4 տոլար: Վերոյիշեալ շոգենաւքերը Կիրակէ օրեր չեն երթեկեկեր, բայց շոգենաւքի դիւրութիւն ամէն գիշեր կայ:

Ուստի, փափաքելի է որ պատկառելի բազմութիւն մը այցելէ յՈւսղբը այս քաղաքէն և շրջակայներէն, սոյն ազգային և կրօնական հանդիսին առաւել ևս շքեղութիւն մը տալու համար:

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ

Մ Ի Ո Ւ Թ Ի Ն
Ե Ի
Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն:

Ներկայ թուով հրատարակած եմք Յիւլիանի Բիւսմէյըր հանդէսին Դեկտեմբերի թուոյն մէջ Մր. Պոպէրը Միջին ելած «Հայաստան և Խաղաղութիւն» վերնագրով ընտիր յօդուածին թարգմանութիւնը, որն որ մեր ընթերցողաց խորին ուշադրութեան կը յանձնարարեմք:

Բերկրութեան առիթ մ'է մեզ տեսնել որ Տիեզերական Խաղաղութեան Միութեան պէս մարմնոյ մը բերան եղող սոյն թերթը Հայկական խնդրոյն կարեւորութիւնն զգալով, իւր սիւնակներն կը բանայ ազգաց ուշադրութեան բերելու այն արդար դատն որ ասկէ շատ առաջ վերջացած պէտք էր ըլլալ, և խոհեմութեամբ կը փատարանէ թէ Հայկական խնդրոյն առաւել ևս երկարուեցաւ պատերազմի մը ամենամաւնական պատճառն կրնայ ըլլալ:

Այո, Տիեզերական Խաղաղութեան Միութեան, ձեր բաժնին մէջ կատարեալ իրաւունք ունիք: Եւ մեզ ալ կը թուի թէ եթէ Եւրոպական Մեծ Տէրութիւնք համախմբելով այդ ձեր յիշած 61 դոյզուածն օր առաջ գործադրել չի տան, շատ գէշ բաներ կրնան պատահիլ: Եւ թերեւս այս անգամ ոչ միայն իննսուն և ութ հազար մարդկայ էակներու այ հար-

իւր իննսուն և ութ հազարներու արեանց յեղման պատճառներ յառաջ գալ: «Հանձն բան մը չէ բայց ստամբքը կը խառնէ» կ'ըսեն:

Հայոց դարերէ ի վեր ունեցած միակ փափաքն եղած է, ազատութեամբ կարենալ պաշտել իրենց քրիստոնէական կրօնքը, և վայելել պատուոյ, կենաց և ընչից ապահովութիւն իւրեանց նախնեաց հողին վրայ: Ինչ համեստ փափաք: Մեզ դարացի և ծանօթ Եւրոպական ազգերէ ո՞րք պէտք է դժկամակի այսչափ դոյզն, համեստ և իրաւացի մի խնդրքին կատարման, և չի կամենայ միջամտել դորա իրականացմանն ի նպատ: Արդեօք այս պահանջմունքէն պակաս ինչով կրնան երեւակայելու իրենց նման և հաւասար քաղաքակրթեալ ժողովուրդ մը կարենայ ապրել այսաշխարհիս մէջ:

Հայերն իրենց մինչև ցայժմ բռնած ընթացքով աշխարհի ցուցուցած են թէ խաղաղասէր ժողովուրդ մը են: ասոր ապացոյց սա կայ որ իրենցմէ նուազ խաղաղասէր ժողովուրդք կարողացած են իրենց ազատութիւնն ձեռք ձգել արդէն: Իսկ Հայերը ո՞չ տակաւին, Բայց Թուրքիոյ մէջ իրաց ներկայ վիճակը բաւական զօրաւոր պատճառներ կուտայ հաւատալու որ Հայ ժողովուրդն ալ սկսած է համոզուել թէ իրենց խաղաղասիրական ձգտմանց մէջ տակաւին քիչ մը կանխահաս են: Եւ քանի որ Եւրոպա բոլորովին պատրաստ չէ տակաւին լոկ խաղաղասիրութեամբ իրենց ներկայեալ խնդրոց նոցա արժանի ուշադրութիւն տալ, Հայք ալ սկսած են իրենց խաղաղասիրական շաղէն մեղրել:

Ուստի, մեծ գովեստի արժանի է Տիեզերական Խաղաղութեան Միութեան այսպէս ճիշդ ժամանակին Հայկական Խնդիրը ձեռք առնելը, և յուսով եմք որ սա իւր Եւրոպական Տիեզերուն միջոցաւ պիտի կարենայ մեծ դեր մը խաղալ Հայկական Խնդրոյն լուծման փութացման մէջ: Ինչպէս Բիւսմէյըրի խմբագրին ծանօթութիւնէն կը տեսնուի, այդ Միութեան Գործադիր անձնախումբին առջև է արդէն Հայկական Խնդիրը խնդրոց կարգին մէջ մտցուելու համար, և տարակոյս չ'ունիմք որ այսուհետէ Հոյոցարդար դատն ալ այդ աշխարհաշէն Միութեան ուշադրութեան և ջանքին հանդէպ պիտի ըլլայ:

Այս առիթի՝ պատիւ է մեզ յայտարարել, թէ մեր ազգայիններէն Մր. Բ. Օղանեան վերոյիշեալ Միութեան անդամակցութեան ընդունուած է, որով Հայկական Խնդրոյ վրայ տեղեկութեանց աղբիւր մը ևս նայն Միութեան մէջ մտած կ'ըլլայ:

Նաե խորին շնորհակալութեան արժանի է թէ յօդուածագիր Մր. Սթայնի և թէ յիշեալ հանդիսին խմբագրին, Բրօք. Մինաս Չէրաղի առ ազգն ըրած անգին ծառայութեանց գնահատութիւնը: Եւ ամէն ապացոյցունիմք և տաւ որ Տիեզերական Խաղաղութեան Միութեան միջամտութեամբ, Հայ դատին ուշիմ և զօրաւոր պաշտպան և գործիչ մարմին մը ևս աւելցած է:

Խ Ա Յ Տ Ա Ռ Ա Կ Ո Ւ Թ Ի Ն

ԽԱՅՏԱՌԱԿՈՒԹԵԱՆ:

Վէհ: Սուլթանը ճարտի Միքատօին յատուկ պատգամաւորութեամբ պատուանշան մը կը զրկէ: Սոյն պատգամաւորութիւնն որ դէպ ի ճարտն կը նաւարկէ Եթ օրը շոգենաւք և իւր վեց հարիւր նաւատեօք, նաւահանգիստէ նաւահանգիստ թափառելէ, և ո՞չ միջադէպին ծովային տուրքերը վճարելու դրամ ո՞չ ալ իւր արքունական մի առաքում ըստ միջազգային օրինաց թնթանօգի ողջոյնէր արձակելու կամ արձակուածներուն պատասխանելու վառօք ունենալու, ամենայն խեղճութեամբ և անօթութեամբ ճարտն կը հասնի: Վերադարձին Չինաց ծովուն մէջ Եթրոքու կը նաւարկի, և ի շնորհս ճարտի կառավարութեան արտաքոյ կարգի ջանից ատոնցմէ յիսուն և կամ վաթսուս հոգիներ միայն կրնան զատուիլ: Միքատօն այս ցաւալի դէպքին համար թէ իւր խորին ցաւակցութիւնն յայտնելու և թէ աղաւաղները ողջմբ իրենց երկիրը վերադարձնելու մարդասիրական տեսակետով, այս անձինքը յատուկ զրահաւորով և պատգամաւորութեամբ մը կոստանդնուպօլիս կը զրկէ: Ճարտնական նաւը Տարանէ կը հասնի և իւր մարդասիրական ուղեւորութեան նպատակը այդ նեղուցի թուրք պաշտօնէին կը հաղորդէ: Ի պատասխանի կոչուութեամբ կարգիւրի նեղուցէն անցնել: Վերադարձին կը բացատրէ թէ իւրենց նաւարկելու և կորուսեալ վեց հարիւր հայրենակցաց մնացորդն բերած է նա: Փոխաբան վերադարձ ըստ Թրքականին պատասխաններ կ'ընդունին: Ճարտնական Ծովակալն այս անակնկալ և հակամարդեկային ընդունելութեան վրայ ապշած և զայրացած կ'որոշէ ետ դառնալ առանց նաւարկելու: Իրենց տեղը յանձնելու, Գուռը և Պալատը ժամանակէ մը ետքը կ'արթնան: Արքունական շոգենաւք մը ամենայն ածապարանօք կը արանայ ճարտնական զրահաւորին ետեւէն և բարեբաղդաբար զանի Զմիւռնիոյ առջև ածուի առած միջոցին կը գտնէ: Հազար ներողութիւնք, պաճառաբանութիւնք, սխալ հասկողութիւնք, Տարտանէի պաշտօնէից արհամարհանք, անուշ լեզու և սոցա նման խել մը ուրիշ բաներ, և նաւարկելու ետ կ'առնուին: Վա՛յ քեզ քաղաք որ թագաւորք մանուկ է:

ԳԱՐԶԵԱԼ ՀԱՇՏՈՒԹԻՒՆ:

Ազգային Պատրիարքարան և Կայսերական Պալատ անգամ մը ևս ճերմակ գրօշներ պարգած զիրար կ'ողջունեն: Ինչ ուրախաւիթ դիպում: Ինչ գովելի արարք: Ճշմարիտ կ'արժէ որ ամէն այ ուրախանայ այս առիթի, զի խաղաղութենէ անոյն ինչ կայ: Ուրիշ ամէն Քրիստոնէայ ազգաց պէս Հայոց ուղամբ ալ ճիշդ այդ է: Եւ ամէն օր կերպեն, «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն» «Glory be to God on high and on earth Peace» Բայց ցաւալին սա է որ շատ անգամներ այս տեսակ առիթներով ուրախանալիս փորձենիս մնացած է:

Շատ Պատրիարքներ Սուլթաններէ փաղաքշուած են, մեծամեծ խոստումներ առած են, և վայրկեան մը հաւատացած են որ Հայ ողջն ալ իւր դարերէ ի վեր փափաքած անդորրութեան և խաղաղութեան շնորհքին հասաւ: Այլ գործադրաբար այս կամայն պատճառներով այդ անդորրութեան և խաղաղութեան հոսն անգամ առած չեն խեղճներ: Եթէ գործը միայն Վեհ: Սուլթանի վրէնար ինչ աղէկ բան պիտի ըլլար: Գի պատճառ մը չունինք հաւատալու որ նա խղճմտիտ և արդարասէր անձ մը չէ: Գիտարութիւնը սա է որ նորա կամքը կատարելու պաշտօն ունեցող անձինքը, կամք չունին իւրեանց տիրող հրամանները կատարելու: Հոս է որ խնդիրը կը պղտորի: Եթէ Բ. Գուռը կոչուած օճախ ին գլխաւորները Սուլթաններուն առ Հայս շնորհած հրովապտակներուն և առանձնաշնորհութեանց կէտք գտնէ անվրդով վայելելու թոյլ տային և կամ դոցա արամադրութեանց մէջէն իրենց ինկած բաժինը անթերի գործադրէին, Հայ ազգն ալ այսօր աշխարհիս ամէնէն երջանիկ ազգերէն մին եղած պիտի ըլլար ըլլալուն տարակոյս չէ: Ինք կ'ընեն ունենալ, Բայց գործադրաբար այսպէս եղած չէ: Եւ եթէ Վեհ: Սուլթանը Սրբազան Խորէն Պատրիարքի ըրած վստահացուցիչ խոստումներուն հետ իրեն Վեհը Վեհը լսեալներուն ալ քիչ մը բարձր ձայնով խօսած չէ, շատ ստիպուած կ'զգամք հաւատալու որ քանի մը օրէն ըլլալիքն է, «Եսկի Բամալ Եսկի Թաս»:

Մ Ե Ր Պ Ե Տ Ա Ս Մ Ա Ն Ը:

Հետզհետէ մեր ընթերցողները և թղթակիցները խորհուրդ կուտան մեզ թէ օգտակար կ'ըլլայ ԱՐԱՐԱՏը որչափ Հայերէն նոյնպիսի ալ Անգղիարէն թերթ մը ընել: Ի դիտութիւն մեր բարեկամաց աստ կը փութամք յայտարարել թէ մեք իրենց կատարելապէս համալիր եմք: այսինքն համոզուած եմք թէ Անգլիարէն լեզուաւ Հայկական օրկան ի մը մեկնելու համար հոգի վրայ հրատարակուին չէ թէ միայն օգտակարութիւն մը այլ կենսական պէտք մը է իրաց ներկայ վիճակին մէջ: Կը յայտարարեմք նաե թէ ԱՐԱՐԱՏԻ խմբագրութիւնը այդ կէտն խորին ուշադրութեան առած և այդ մասին յստակ որոշման մը կ'ընեն, մօտ ապագային մէջ նորա գործադրութեան ձեռնարկելու դիտաւորութեամբ: որոյ փութացումը մեծաւ մասամբ ներկայ թերթիս մեր հայրենակիցներէն գտնելիք ընդունելութիւնէն կախումն ունի: Թէ որդ Անգլիարէն հրատարակութեան մասին ինչ է մեր դիտաւորութիւնը և ծրագիրը, պիտի հրատարակեմք ընդարձակօրէն մեր յաջորդ թուերէն մեկուն մէջ:

Այս առիթի կ'ուզեմք նաե աւելցնել որ թերթիս խմբագրութիւնը յօժարութեամբ պիտի տանի թէ սոյն և թէ այդպիսի հրատարակութեան մը հետ կցեալ ծանր պարտականութիւնը, մի միայն սա անկախութեամբ որ մեր հայրենակիցք պիտի զգան իրենց բաժին ինկած դոյզն մասին կատարման անհրաժեշտութիւնը, որով կրնամք մեր ներկայ ձեռնարկը գտնել իւր ծախքը վճարելու չափ յաջող հիման վրայ դնել:

ՍՈՒԼՈՒՆ ԵՒ ՊԱՏՐԻԱՐԿ.

Վեհ. Սուլթանի և Ամեն. Խո-
րեն Ս. Պատրիարքի միջև վեր-
ջերս տեղի ունեցած տեսակի-
ցութեան հետեւեալ մանրամաս-
նութիւնները Լոսանքի Տէյլի Նի-
ուզի մէջ կը կարգաւորուին, նորա Պէ-
րիի թղթակցէն Գե. 25 թուա-
կանաւ հեռագրուած:

Վերջերս առնուած տեղեկու-
թեանց նախընթաց, Կոստանդնուպո-
լիս մէջ Հայկական խնդրոյն նկատմամբ
իրաց վիճակը բարձրովն փոխուած
է: Պատրիարքը Սուլթանին հետ ու-
նեցած երկու տեսակցութեանը մէջ
երկարորէն բացատրեց թէ ինչպէս
Հայաստանի մէջ վերջին խռովու-
թիւնները պատահեցան: Կըսուի
թէ Ապտ. Իւլ. Համիտ սաստիկ
յուզուեցաւ որ իր անուամբ իւր
Քրիստոնեայ հպատակները այդպէս
կը կեղեքուին: Պատրիարքին ներ-
կայութեանը հետագիւրները զորեց Հա-
յաստանի կառավարիչներուն, բա-
ցատրութիւն ուղղելով այն իրողու-
թեանց նկատմամբ որք ձեռք իրեն
գիտութեան բերուած էին: Կ'երեւի
թէ այս հեռագրեր շատ նուազ ար-
գելնը չունեցան: Այժմ Կ. Պոլսոյ մէջ
ամենէն գլխաւոր խոսակցութեան
նիւթն է, Պիլիկիի Կառավարչէն ըն-
դունած հեռագրի մը որուն մէջ Մէհ-
մէտ Բէն-Քի Բաշա կը տեղեկացնէ
թէ Արայ և Փող Գուրգուրու եր-
կու կեղծողները հնազանդութեան
բերուած են, և թէ նոցա գլ-
խաւոր թաշկիր Պէյ անձնատուր ե-
ղած է: Այս նշանաւոր գլխաւորը
տասն և հինգ տարի առաջ Մէմու-
զինի Հայոց վանքը գրաւեց. զա-
նի ամբարներէ մը վերամբար է թու-
րական իշխանութեանց դէմ դիմա-
մէջ քանի անգամներ զօրք դրուե-
ցան նորա դէմ, առանց կարենալ
զանի ձերբակալելու:

Սուրեն Պատրիարք արգէն
իւր պաշտօնական այցելութիւննե-
րը տուած է Կառավարութեան Պաշ-
տօնէից: Արքունական կառքով մը
իւր անձնական բնակարանէն ի Պատ-
րիարքարան փոխադրուեցաւ: Կայ-
սերական Պաշտօնի Զորաց գունդ
մը կառքին բողբոսովք պատուով Պա-
շայան Կարգ մը կազմեցին, և Կը-
րօնական և Քաղաքական ժողովնե-
րը դիմաւորեցին իրենց առաջնոր-
դը և ընկերացան նորա հետ ի
Մայր Եկեղեցի ուր ինքն Պատ-
րիարքը Ս. Պատարագ մատուց:

Կըսուի թէ իւր պաշտօնին գը-
լուիւր անցնելու սրտումը մեծաւ
մասամբ վերջին խռովութեանց
պատճառաւ ձերբակալուել Հայոց ա-
զատութեան համար Սուլթանին ը-
րած խոստումէն յառաջ եկած է:
Յառաջիկայ շաբթու իսկ մը Հայոց
գաղութայինները տեղի պիտի ու-
նենան որոց մէջ են նաև Տատեան
Յարութիւն Բաշայի երկու քեռոր-
դիւնները: Կըսուեցաւ որ Ապտ-
իւլ. Համիտ ամբաստանելոց ներո-
ղութիւն չնորհէ:

ԹԵ՛ ՈՒՐԻՇՆԵՐԸ ԻՆՉ ԿԸ ԽՈՐՀԻՆ
ՄԵՐ ՎՐԱՅ:

... Խմբագիր ԱՐԱՐԱՍԻ.
Թէպէտև գրելուս ան
հրապարակութիւնի մը մէջ խո-
սելու, սակայն սրտայայտութեան
ընդ ի կարողացայ զգուշիւ և ողջու-
նելու յապաղել բողոքի մը ա-
ռաջին թերթը՝ որուն արմատը
քաջ կը ճանաչեմ, և կը իշխեմ
տասն և հինգ տարի յառա յիշ-
եալ ՆԱՀԱՏԱԿԻ դադարէն բո-
լորտիքը ազգասիրաց խուռն
բաղմութեան արտասուաց աղա-
նատիւն ըլլալս, կը յիշեմ նաև բո-
լորէն աչքերն դադարէն դէպի
երկինք յարելն, Կըզդայի թէ:

ամէն սիրտ զայրացեալ վրէժ և
վրէժ կոպտուոր, դէպի այն
կառավարութիւն կոչուած աւա-
զակապետ ճիւղներուն դէմ:

Այսօր Հայը ուրախութիւն
կ'զգայ տեսնելով որ այն մեծա-
հոգիներու (որոնք հողի տակ կը
ննջեն այժմ) սերմանած ԿԱՅՐԱՆ
հետզհետէ վառելու վրայ են,
որոցմէ մին կը համարուիք և
դուք: Ուրեմն, սիրելի տէ՛ր քա-
ջատիր, աշխատեցէ՛ք, քանզի
Հայը իր անցեալը չի մոռնար, և
բերկրութեամբ պիտի օժանդա-
կէ ԱՐԱՐԱՍԻ՛ն որ կը խոստա-
նայ հետեւի իր նախնեաց և յա-
րատեալ արդար ԳԱՏԸ պաշտպա-
նելու:

Գ. Յ.

Ն. Ե. Յուն. 10

... Խմբագիր

Բանի մ'օրեր առաջ շնորհա-
լութեամբ ընդունեցի ձեր ԱՐԱՐԱՍԻ
առաջին թիւը և ուղեցի ձեզ երկ-
տող մը զբեւ այդ առթիւ, բայց
զբաղուեցաւ ստիպելուն ինձ մինչև
ցայսօր սպասել, որուն տարակոյս
չունիմ, ամէն ոք կրնայ ներողամիտ
ըլլալ:

Սիրելի է ինձ նախ շնորհա-
լութեամբ ձեր նոր ձեռնարկին հա-
մար որով կը փութաք ի յոյս ընծա-
յել այն պատմական ԱՐԱՐԱՍԸ որն
որ շատեր կը կարծէին թէ ձեր բա-
րեյիշատակ Հօր հետ գերեզման ի
ջած էր անպաքէն, վայրագ թրքերու
բարբարոսութիւններէն յաղթա-
հար: Արդարև Մատթէոս Այվա-
տեան մեռաւ իւր լրագրին, իր սկզ-
բունքին և արդարութեան սիրոյն
համար, և հետեւաբար ԱՐԱՐԱՍԸ
գաղթեցաւ անոր ցաւալի մահուամբ,
և ոչ թէ մեռաւ, որպէս կարծեցին
շատեր: զի սկզբունքն ու արդարու-
թիւնն չէին կրնար մեռնել, և ԱՐԱՐ-
ԱՍԸ չէր կարելի որ լուռ մնար յա-
ւիտեան: Երկինք պահած էին օր մը
յորում այդ թերթը նորէն հրապա-
րակ պիտի դար յանուն իւր նահա-
տակ Հաստատողին բողոքելու ան-
արդարին առջև, և այնպիսի մէկի
մը ձեռքը որ ամէն իրաւունք ունէր
լեցնել իւր հանգուցեալ Հօր տեղն
որ ԵՍ տարիներէ ի վեր բաց կը մը-
նար ազգին մէջ:

Ուրախ եմ որ այդ օր հասած
է ապաքէն և ԱՐԱՐԱՍԸ իր ձայնն կը
բարձրացնէ այս անգամ չէ թէ Թըր-
քական հարստահարիչ մահական եր-
կելուն, այլ Ազատութեան Աշ-
խարհի ազատ արծուի պաշտպանու-
թեան ներքեւ: Եւ սիրելի է ինձ
հաստատել, խմբագիր, թէ ամէն Հայ
անխորժ ողջագուրեց նորա գաղութ
այնպէս որպէս կարելի է ընկերորու-
եալ սիրելու մը գտնուած պահուն:

Մեր ազգին մէջ կան շատեր
որք կը կարծեն թէ վերջին մի քանի
տարիներուն մէջ հրապարակ եկան
Թրքական բարբարոսութեանց դէմ
բողոքող հրապարակներն, և այդ
ալ թուրքիայէ դուրս երկիրներու
մէջ միայն: այս կարծիք ոչ միայն
սխալ այլ ծաղրելի է միանգամայն:
ամէն անոնք որք ժամանակակից
պատմութեան տեղեակ են, գիտեն
անշուշտ թէ նոյն իսկ Կ. Պոլսոյ մէջ
գտնուած են հրապարակախոսներ
վայրագ Թրքիայ արբարոսութեանց
դէմ բողոքող, և եղած է մէկն ալ
որ զոհուած է այդ առթիւ Թուրք
թիկնապահներու ոտից տակ իր 15
տարիներ առաջ, և ազգին կողմա-
նէ նահատակ հոգեւորութեան: Այդ
անձ Մատթէոս Այվատեանն էր:
ձէր հոյակապ Հայրը որուն գաւա-
լիւնը թրքարեւ պատիւ մ'է ձեզ, և
նորա ընտանիք ճամբան շարու-
նակին մեծ փառք մը և զօրաւոր
գրաւական մը փառաւոր յաջողու-
թեան: Քաջալերուեցէ՛ք, ուրեմն,
Հայ ազգը ձեր հետն է Մատթէոս

Այվատեանի հոգին երկնից բար-
ձունքէն ձեզ կարապետ և առաջ-
նորդ պիտի ըլլայ, և անոր աճիւնն
ցուրտ գերեզմանի կախարչին տա-
կէն պիտի բողոքէ բարձրաձայն այն
Հայերուն դէմ որք անզգայ մնան
և անտարբեր ԱՐԱՐԱՍԸ առաջ մղե-
լու գործին մէջ: սակայն չեմ ու-
զեր հաւատալ թէ պիտի լինի այն-
չափ սառած սիրտ մը որ ծանօթա-
նալով ձեր թերթի անցելոյն, կա-
րենայ անտարբեր մնալ և չի միաց-
նել իւր ձայն Հայ ազգի ձայնին հետ
կոչելով յառաջ ԱՐԱՐԱՍԸ... յա-
ռաջ...:

Թող իմ այս համառօտ գրու-
թիւնս ալ այդ բարձրացող ձայնե-
րուն միանալով հրապարակաւ աղա-
ղակէ յառաջ...:

ԿԱՐԵՒՈՐ ԳԻՏԵԼԻՔ

ԿՈՒՅԵՍ ՀԱՅԵԼԻ ԸԼԼԱԼ:

Մի՛ ուրիշին սխալ գտնել:

Մի՛ հաւատար ամէն լսած չար-
եացք:

Մի՛ կարողութեանէ՛ք աւելի կամ
պակաս հաղուիր:

Մի՛ որ և է բան վար գարներ,
որովհետև դուն չունիս:

Մի՛ հարձակիր ուրիշներուն
կրօնական հաւատքին վրայ:

Մի՛ խիստ ըլլար ընկերական
կենաց մէջ քենէ վար եղողներուն:

Մի՛ եղբայրացիներ որ դու երբէք
կենաց մէջ պատեհութիւն ունեցած
չես:

Մի՛ հակասեր ուրիշները, մին-
չև իսկ թէ՛ք ապահով ըլլաւ որ ի-
րաւ ես:

Մի՛ թարթած պտուի, պատ-
ճառ բռնելով որ ամէն ոք քեզ կը
ճանչնայ:

Մի՛ հետաքրքիր ըլլար, մինչև
իսկ քու ամենամտեղիմ բարեկամիդ
գործերուն:

Մի՛ հաւատար որ այս աշխար-
հիս մէջ քենէ ի գտն ամէն մարդ
երջանիկ է:

Մի՛ կրկներ բանաստեղծ, մինչև
իսկ թէ՛ք այդ ներկայ եղող բազմու-
թեան մ'ալ հաճելի ըլլայ:

Մի՛ հաստատ գաղափար մը
յայտներ բայց եթէ կատարելապէս
գիտես թէ ինչ բան վրայ կը խօսիս,
և ինչ քանի ժամանակ մը ըլլա-
լու բայց եթէ ազնուական մը-
այսինքն մարդ մը որ բոլոր աշխար-
հի նկատողութիւն ունի, և որու
կենացը կը կառավարուի Ոսկի Օրդն-
քով: (Որպէս կամիք թէ արասցնէ
ձեզ մարդիկ, այնպէս արարէք եւ
դուք ինչոցա):

Ա. Շ. Ն. Ա. Ր. Հ.

ՏԱՐԱՎՈՒԹԻՒՆ, — Երկրագնդի մա-
կերեսներն է 197 միլիոն քառա-
կուսի մղոն, որոյ 145 միլիոնը Ղուր,
և 52,590,425 ընդամենը է Հասարակած
ին շրջագիծն է 248,968,214 մղոն:
Տրամագիծը՝ բևեռէ բևեռ, 78,988,
809 մղոն, եւ ի հասարակածին
79,249,111 մղոն:
ԲԱՄԱՆՄՈՒՆՔ, — Գլխաւոր ցամա-
քային բաժանումներն են, Ամերի-
կայ՝ 8,155,458 քառակուսի մղոն.
հարաւային Ամերիկայ՝ 7,410,042
քառակուսի մղոն. Եւրոպայ՝ 5,807,
428,954 քառակուսի մղոն, Ասիայի
11 միլիոն քառակուսի մղոն և Ու-
կրասիայ՝ 5,108,457 մղոն:
ԼՅՈՒՆՔ, — Աշխարհիս ամենէն
բարձր լեռները յաջորդաբար ասոնք
են. Էլբրուս (ի Բարուա կղզի),
52,765 ոտք. Էվերէսթ (ի Հնդկաս-
տան) 9,002 ոտք. Իլլամբէր (ի Պո-
ղովիս), 24,800 ոտք. Իւրանկըլ
(ի Ալպաք), 20,400 ոտք. Քիլիման-
ջարօ (ի Արեւելեան Ասիայի) 20,065
ոտք. Էլպարուզ (ի Ռուսաստան),
18,528 ոտք. Արարատ (ի Հայաստան)
17,260 ոտք:

ԳԵՏԵՐ, Եւն. — Ամենէն մեծ
գետերը յաջորդաբար են, ի Հիւսի-
սային Ամերիկայ. Միսսուրի և Միս-
սիսի, 4,575 մղոն. ի Հարաւային Ա-
մերիկայ, Ամազոն, 4,000 մղոն. Եւ-
րոպայ, Վոլգա, 2,500 մղոն. յԱսիա,
« Եանկի-ցէ-քեանկ », 5,000 մղոն.
յԱֆրիկէ, Նեղոս, 4,100 մղոն. յԱֆ-
րիկանիս, Մընէյ և Տարիսի, 1,500
մղոն:

Լիճեր, Եւն. — մենէն մեծ
լիճերն են, Ամերիկայի մէջ, Սիւր-
իօր լիճ, որոյ մակերեսային է 32 հա-
զար քառակուսի մղոն. Միչիկան լիճ,
22,400 քառակուսի մղոն: Ամենէն
խորունկ հանքերը ամիսահանքերն
են Լամպէրդ, Պէճիքայի մէջ, 5,490
ոտք խորունկ է. Յուրքօ, Սաք-
սօնիայի մէջ՝ 2,657. Ռօզպրիճ,
Անգլիայ՝ 2,510. Դոմօն, Դաղդիա՝
1,876: Արծաթի հանքերը Պրիքէն-
պուրի, Աւստրիա՝ 3,280 ոտք. Սը-
Անտրէ, Բուսարի՝ 2,552: Ամենէն
խորունկ փորուած հանքն Շլատէն-
պիլի մէջ է, 5,754 ոտք:

ԿԼԻՄԱ, — Երկրագունդի օդին
ջերմութիւնը, միջին հաշուով խոստ-
ատիման է (Պարէնհայթ). բեւեռ-
ները՝ 15 աստիճան. բեւեռային
գոտիները 36 աստիճան. բարեխա-
ռըն գոտիները 75 աստիճան, հասա-
րակածը 82 աստիճան: Բնական
ցուրտերու ամենէն սաստիկը զե-
րօն 105 աստիճան վար կը հաշ-
ուուի: Ամենէն սաստիկ բնական
ջերմութիւնը Եգիպտոսի մէջ է, 117
աստիճան:

ԺՈՂՈՎՈՐԻՒՆ, — Աշխարհիս բո-
լոր բնակչաց թ. է 1,449,576,
300, որոն ին հարիւրէ աւելի
տարբեր լեզուներ եւ 5 հազարէ
աւելի խան լեզուներ կը խօսին.
ասոնք կը բնակին սա բաժանմուն-
քով. Հիւսիսային Ամերիկայի մէջ
79,841, 9. Հարաւային Ամերիկա-
յի մէջ 50,776,426. Եւրոպայի մէջ
541,858,528. Ասիայի մէջ 714 միլիոն
հարիւր քան մէկ. Աֆրիկէի մէջ
219,952,621. Ուկրաինայի մէջ 57,
610,495: Ձէնը կրելու կարող մար-
դոց թիւը բնակչաց թուոյն մէջ քա-
նորդը ըլլալ կը հաշուուի: Արք և
կանայք թուով գրեթէ հաւասար
են: Ամուսնացեալ մարդիկ չա-
մուսնացածներէն աւելի կապին:
Բարձրահասակ մարդիկ, կարճահա-
սակներէն աւելի կապին:

Կրօնական դաւանութիւնները
1,100 է աւելի են, սակայն բաժ-
նուած. Հռոմէական Կաթոլիկ 198
միլիոն. Բողոքական 110 միլիոն.
Հայ, Յոյն և Արեւելեան Եկեղեցիք
95 միլիոն. Չրէյք 8 միլիոն. Ան-
աստածք, Աստուածեմեք և Ազատ
նորհողք 85 միլիոն. Պուտտայա-
կանք 420 միլիոն. Պրահմականք 180
միլիոն. Մահմադականք 150 միլիոն.
Հուդայականք 50 միլիոն. այլ դաւա-
նութիւնք 125 միլիոն:

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Նա. — Բոլորովին սպառած կըզ-
գամ. իցիւ թէ մեռած ըլլայի:
Կինը. — Լաւ ուրեմն, ինչո՞ւ թող
չես տար որ բժիշկ մը կանչեմ:

Հիւր. — Կըսես թէ այս. ոտարէի
ապուր է: Չեմ հաւատար:

Սպասաւոր. — Այո, է, տէ՛ր իմ,
եթէ վայրկեան մը սպասէք, տէ՛ր
իմ, ձեզ կը բերեմ այն ոտարէն որ-
մէ այդ ապուրը շինեցինք:

Պարոն Նիկողիմոս. — Այս գաշ-
կինաները քանի՞ կը ծախես:
Վաճառող. — Մէկ տուր:
Պարոն Նիկողիմոս. — (Սուլելով.)
Ուրեմն չեմ կարծեր որ Մարիամին
յուզարկաւորութեան կարենամ լալ:

Թըմբ. — Բարեկամ. — Այս գաշ-
դաշնակը: « Ի՞նչ կը շնանա զարնել
եւ գինէս գոցեց հայրը քովի սեն:

եակէն: « Իմ նոր կրթութեան
գրքէս Առաջին Գայլը նուազածու-
թեան, վարժութեան մ'է ո, պա-
տախտանեց աղջիկը: « Այո՛, գիտ-
ցայ որ ոտքովդ կը զարնես » ըսաւ
հայրը: « Բայց այդչափ ուժգին մի
քայլեր դաշնակին մատըներուն
վրայ, միտքս կը խանգարուի: »

Համակիր Բարեկամ. — Այդ շատ
գէշ պաղ մ'է որ առած ես, սիրելի
պարոն: Հիմա տես ինչ՞ ըրէ, շիտակ
տուն գնայ և քիչ մը տաք...:

Պարոն Հազարգոյ. — (Գրպանէն
տետրակ մը հանելով.) Կաղաչեմայդ
ըսածինդ սա տեղ գրել. « Հանցեցէք,
Արդէն հարիւր քառասուն և վեց
ուրիշ դեղագիրներ ինձ տրուած են,
և կը յուսամ իրիւրէն առաջ բա-
ւական բարեկամներ հանդիպիլ ո-
րոնցմով թիւը երկու հարիւրի ելլայ:

Մի տիկին դիմելով իր ջահիլ
խոհարարուհուն.

— Ձեր անկարգ վարմունքը ար-
գէն չափ ու սահման չունի. դուք
չէք բաւականանում մի հատ սիրե-
կանով, այլ ամէն օր ձեր խոհանո-
ցում մի նոր սուղատ եմ տեսնում
կերակուր ուտելիս...:

Ինչ արած, արհամարհական
ժպիտով պատասխանում է խոհարա-
րուհին, ձեր տան մէջ այնքան քիչ
է ծախսուում ուտելիքի վրայ, որ մի
և նոյն սիրեկանը երբէք չէ կարող
երկար ժամանակ դիմանալ մեզ
մօտ...: — Մշակ:

Մի ներտասարդ խնդրում է մի
տիկնոջը թողաւութիւն վերցնելու
նրա հարուստ գրադարանից մի
գիրք. կարգաւոր համար.
— Ներեցէ՛ք, բայց ես սկզբուն-
քով ոչ ոքին գրքեր չեմ տալիս իմ
գրադարանից:

Ինչ պատճառով, տիկին, հար-
ցնում է երիտասարդը.

— Որովհետև ծանօթների մօտ
վերցած գրքերը, ընդհանրապէս եր-
բէք չեն վերադարձնում...:

— Մի՞թէ այդքան քիչ հաւատ
ունէք դէպի մարդիկ...:

— Ես այդ փորձով գիտեմ, պա-
տասխանում է տիկինը: Եւ ապա
ցոյց տալով իր գրադարանի վրայ,
աւելացնում է.

— Տեսնում եք այդ իմ հարուստ
գրադարանը, դա ամբողջապէս կազ-
մվել է այն գրքերից, որ հետզհե-
տե վերցնում է իմ ծանօթներիցս
և երբէք նրանց չէ վերադարձ-
նում...: — Մշակ:

Հ Ր Ա Ի Ե Ր
Ա. Ռ. Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Ս.

Ողորմութեամբ Աստուծոյ և
նոր իրատուութեամբ ազգայնոց ա-
ւարտեցաւ Ուսման Հայկական Ե-
կեղեցւոյ շինութիւնն հանդերձ
ժողովաւորաւոր սրահով, որոյ բաց-
ման և օժան նորիկական հանդէսը
տեղի պիտի ունենայ ճիշտ Յունիս
Յունիս ըստ տօնացոյցի Հայոց.
Ի գիտութիւն պատուական Հայ գաղ-
թականութեան Ամերիկայի ծանու-
ցանելով, կ'հրաւիրեմք զամենեւին
սոյն ազգային և կրօնական ուրա-
խաութիւն տօնախմբութիւնն:

Ի Դիմաց Հոգաբարձութեան
Հա կախան Եկեղեցւոյ
Մ Պատիկեան, Կ. Թաշեան,
Ճտեմագիր.

ԿՍԿԾԱՆՔ

Գրեց
Հ. Ե. Կ. Ե. Ն.

Հեղինակին ընտիր և Կ բա-
բանաստեղծութիւնն է այ արձակ
գրուած, որ կը վաճառուի խմբագ-
րութեան քով հասար 135 էնթի:

ՏԵՅԼԻ ՆՈՒՋ ՍՈՒՏ ԿԸ ԽՕՄԻ ԵՂԵՐ .

Թարիք Թուրք լրագրէն հետեւեալին թարգմանութիւնը Կոստանդնուպոլսոյ Արեւելիքի կը պարտիմք .

Ասկից առաջ մեր մէկ հրատարակութեան մէջ ըսած էինք թէ ի Լոնտոն հրատարակեալ Տէյլի Նիւզ լրագիրը ժամանակէ մը ի վեր Կարնոյ նախագին չըլալայ օսմանեան նախանգաց մասին սուտ ու սխալ լուրեր կը հրատարակէ և թէ Անգլիոյ հանրային կարծիքը թիւրեւեւ համար իւր ըրած ջանքերը բոլորովին հակառակ են Անգլիոյ ճշմարիտ շահերուն : Մինչդեռ կ'ապաստէր որ յիշեալ լրագիրն այս հերքմանց վրայ իւր լեզուն բարեփոխելով պիտի զգուշանայ իւր այդ զրպատութիւններէն , զարմանալով տեսնէ որ կը շարունակէ իւր առաջուան անուղիղ ընթացքն և մեզմէ զատ եւրոպական արդարասէր ոմանց հերքումներուն ևս կենթարկի :

Դի ստորեւ կը հրատարակենք այդ կարգին վերաբերող լրագիրներէ միոյն Վիէննայի Գոլէսթրասսայի Տը Լ'Էսթ լրագրոյ վերջին թիւոյն մէջ հրատարակեալ Կարնոյ շահեկան մէկ նամակը .

Կարնի 8 դեկտ. (Ն . Տ .)
Այս կողմերու միջ կատարեալ անդորրութիւն ու ապագովութիւն կը տիրէ : Եթէ Տէյլի Նիւզ լրագիրն աշխատած չըլլայ հանրային կարծիքէ զբաւեռնող սուտ և առասպելաբան լուրերով , յայտնի է թէ Եւրոպայի մէջ բնաւ կարեւորութիւն չի պիտի տրուէր այս տեղերու վիճակին :

Տէյլի Նիւզի հրատարակած սուտ լուրերուն իբրև մէկ նմոյշը ցոյց կրնամ տալ սա լուրը թէ Կարնոյ կուսակալ Հասան Սայրի փաշա քիւրտ ցեղապետները նախագին կեդրոնը բերել տալով նպատակ ունի եղեր յանձնարարել անոնց որպէս զի պատրաստ գտնուին ի հարկին յարձակելու համար անվնաս հայ հպատակաց վրայ , Բայց ասկէց աւելի սուտ լուր մը չը կրնար ըլլալ , ինչպէս առաջ ալ ըսած էի , քիւրտ ցեղապետները նախագին կեդրոնը բերուած են խոստում առնելու համար իրենցմէ որպէս զի և ոչ մէկ տեղ մը խաղաղութիւնը խանգարող դէպք պատահի , և եթէ պատահի ալ յանցաւորք քիւրտ ցեղերու կողմէ պատժուին և այսպէս անգամ մը եւս ամրապնդուի հանրային անդորրութիւնն որ արդէն կատարեալ է :

Տէյլի Նիւզ ըսած է նաև թէ Կարնոյ կուսակալը առաջակց հետ յարաբերութիւն ունենալով , Ալաշ-կերտի գաղմագած ընտրութիւնէ մէջ Կարնոյ պէյ անուն մարդ մը , զոր նախորդ կուսակալն աքսորել որոշած էր , Անգլիական լրագիրը զայս յանցանք մը կը նկատէ : Ես , Անգլիոյ պէյի նկատմամբ տեղեկութիւններ առի ամենէն անկողնակալ և ամենավստահելի աղբիւրէ մը : Այս տեղեկութեամբ ստուգեցի թէ Անգլիոյ պէյ սչ միայն Տէյլի Նիւզի կողմէ զրպարտեալ արաքներու մէջ գտնուած է , այլ ընդհակառակն Անգլիոյ պէյ միակ մարդն է որ կրնայ Ալաշկերտ գաւառակը բարեւոյ կերպիւր կառավարելու յաջողիլ : Մինչեւ հիմայ ոչ մէկ մարդու մտքէն անցած է աքսորել զնա :

Տէյլի Նիւզ կը պնդէ թէ Անգլիոյ պէյ որդին և եղբայրն է այն առաջակց որք երկար ատեն ասպադակած են Ալաշկերտի մէջ : Անգլիական թերթին այս ըսածն ալ ստույգ չէ , որովհետեւ Անգլիոյ պէյի հակառակորդք և ազգականք շատոնց մեռած են :

Այս նկատմամբ մեր խորհրդածութիւնը յաջորդ թիւով : Ե . թ .

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

— Կոստանդնուպոլսոյ լրագիրք կը ծանուցանեն թէ Ամեն . Խորէն Ս . Պատրիարք Դեկտ . ի Հինգշաբթի օր Սուլթանին կողմանէ պալատ կանչուելով երկար տեսակցութիւն մը ունեցած է Նորին Վեհափառութեան հետ , և ազգային խնդրոց նկատմամբ ինչ ինչ համաձայնութիւններ կրցած են զոյանալ Սուլթանին և իւր միջև , յորմէ յետոյ Նորին Սրբազնութիւն վերստին իւր Պատրիարքական պաշտօնի գլուխըն անցած է :

Մեր Վիէննայի թղթակցէն կը տեղեկանամք թէ Թրամվայի Նոր գիւտ մը եղած է վերջերս Նոյն քաղաքի մէջ , որու տէրերն են Պրն . Ֆրիշլէ Պոհնմիացին և Հայագլի մը : Սոյն նորագիւտ կառքը մինչև հիմայ գործածուած զօրութիւններէն աւելի անոն և պարզ գործիքով մը կ'ընթանայ : Սոյն գիւտի արտօնատէրք ամսոյս վերջերս Նիւ Եորք կը հասնին իրենց գործնական Մօսկովայի Նոր հնարքը Միացեալ Նահանգաց մէջ ևս շահագործելու համար :

— Արեւելեան այլ և այլ հարցերի վերաբերմամբ Բերնիլու միջոցաւ կ'օնթերիքնցիայում , ինչպէս երևում է մայրաքաղաքի լրագիրներէ , պէտք է մասնակցեն միայն չորս Եւրոպական պետութիւններ , այն է՝ Անգլիան , Գերմանիան , Աւստրիան և Ռուսիան : Այդ չորս պետութիւններին ներկայացուցիչները կ'օնթերիքնցիայում լինելու են . մարկիզ Սուրբէ , գեներալ Կապրիվի , կոմս Կալնոսկի և սինիօր Կրիսպի : Մշակ :

— Տատեան Վահրամ և Տրդատ պէյերու ձեռքակալումը տալիսին ամէն կող խիստ ուշադրութիւնէ զրաւելու վրայ է : Առնուած տեղեկութեանց նայելով Վահրամ Պէյ իւր փակուած տեղին գէշութեան չի դիմանալով ծանրապէս հիւանդացած է :

— Խեղ մը Նոր ձերբակալութիւնը կատարուած են ի Կոստանդնուպոլսոյ որոց մէջ են նաև գրաւածաւ Ալիքսան և խմբագիր Հրանտ : Տէյլի Նիւզ :

— Կալկաթայի Օպերա Վերը կը ծանուցանէ թէ Մահմետական կրօնը ուրիշ երկիրներու մէջ ալ տարածելու նպատակաւ Հնդկաստանի մէջ կազմեալ ընկերութիւն մը մտադրի է յԱնգլիա և ի Միացեալ Նահանգս Խաղաղական կրօնքը քարոզելու համար Միսիսսիպիի զրկել :

— Լոնտոնի Անգլիական լրագիրք ընդարձակօրէն կը խօսին Դեկտեմբեր 22ին Հաուարտին մէջ Մեծայարդ Ո . Ը . Կլատթընի ծննդեան ութսունամեկերորդ տարեդարձի , և ի յիշատակ նորա ամուսնութեան յիսուներորդ տարեդարձի գիւղին բնակչաց կողմանէ կանգնուած աղբիւրի բացման հանդիսին վրայօք : Յիշեալ գիւղը ամէն կողմէ հասած երեւելի այցելուներով լեցուած էր Նոյն օրը , և տեղւոյն նամակատուներ պարտաւորած էր արտաքոյ կարգի օգնականներ վարձել այս առթիւ հասած մեծաքանակ նամակները և նուէրներու , ծրարները ժամանակին իրենց տիրոջը հասցնելու համար :

Սիւմալու լրագրոյ տէր և տնօրէն Պ . Հանրի կայս . կառաւարդութեանէն արտօնութիւն խնդրած է՝ Ղալաթիոյ և Պոլսոյ երկու աշտարակներուն մէջ վերելակներու հաստատման համար նախնական քննութիւններ կատարել :

Պ . Հանրի Ամերիկեան Էյլ վաթօն Քոմիէնի ընկերութեան ներկայացուցիչն է Կ . Պիտի Արեւելք :

— Յաւօք սրտի կը տեղեկանամք Մարտիկոյ Արմէնիայի խմբագիր Պրն .

Մկրտիչ Փորթուգալեանի անձնական տկարութեան պատճառաւ անկողնոյ ծառայելն : Այս պատճառաւ Արմէնիայի վերջի թիւը միայն կէս թերթ հրատարակուած է :

— Ամերիկեան լրագրեր կը ծանուցանեն թէ Սիմի օվ Չիքալօ շոգեւնտով Նիւ-Եորք ելած են 86 Թուրքիացի կապերտագործներ , որք իրենց գործիքներն իրենց հետ բերած են : Կը կարծուի թէ Ամերիկայի կապերտագործաւ տունք ոմանք այս մարդիկը բերած են՝ յԱմերիկա աշխատանքիլու համար :

Նոյն լրագիրք կը ծանուցանեն նաև շատ մը Սուրիացիներ եկած են , որք ի Փէնսիլվանիա պիտի հաստատուին Նոր Դամասկոս անուամբ նորակազմ գաղթականութեամբ մը : — Արեւելք

— Հինգ հարիւր Ռուսիացի Հնգից բազմութիւն մը . արք , կանայք և մանկութիւն Երեւելքի օր Տօվրի նահանգիստը եկած են ի Միացեալ Նահանգս գաղթելու գիտաւորութեամբ :

— Ամոնոյս 13 ին Պոպլէյէն հասած հեռագիր մը կը ծանուցանէ թէ մեծ հրդեհ մը շատ տառապանք պատճառած է Նոյն քաղաքին մէջ : Երկու հարիւրէ աւելի տուններ ի հիմանէ այրած են , և հարիւրաւոր ընտանիքներ առանց բնակարանի մընացած են :

— Ըսած էր թէ Մէլիէպուրկ-Շվիլային դուքսը , իւր Դքսութեան առաջին նախարարութիւնն առաջարկած էր առ Պիզմարք իշխան , Դուքսը այս լուրը պաշտօնապէս հերքած է :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

— Թրքական Դեսպան Մալ-րօսէնի Պէյ շարաթէ մը ի վեր քաղաք կը գտնուի ի Հօթել Ալպէմար :

— Հայկական Միութիւն իւր սովորական նիստն ունեցաւ ամոնոյս 3 ին . իւր օրակարգով և Միութեան Տարեդարձի և Վարդանանց հանդիսին նկատմամբ մի քանի կարգադրութիւններ ընելէ ետք օրագրէն մինչև յառաջիկայ Շարաթ օր :

— Արթ . Յովսէփ Մ . Վ . Սարաճեան յառաջիկայ շաբթու մէջ քաղաք կը հասնի , Ս . Ծննդեան առթիւ տեղւոյս Հայ Ժողովուրդը հազեւորապէս միութեալով համար : Հաւանական է որ Նորին Արժանապատուութիւնը այս անգամ մի քանի շաբթիներ քաղաքս մնայ և տեղւոյս Հայաստանեայց Եկեղեցւոյ ներկայումս ինչ ինչ կարգադրութիւններով զբաղի :

— Բաթըրսըն , Ն . Ճ . ի մէջ ձօն Հենտ և Սըն ժապաւէնի գործարանի հիւսողք գիւնեւ սակաւութեան պատճառաւ գործադուլ ըրած ըլլալով , քաղաքէս քսան և հինգի չափ Հայ հիւսողներ ամոնոյս 7 ին Նոյն գործարանը գիմելով գործել փորձած են , Երեկոյն գործադուլած հիւսողք թեպէտ ուղած են Հայոց վրայ յարձակելով զանոնք զանակոծել իւրեանց տեղերը բռնելուն համար , բայց տեղւոյն օստիկանութեան պաշտպանութեամբ Հայ գործաւորք կարողացած են անվնաս տեղերնին դառնալ :

— Y. M. C. A. ի սրահին մէջ Նոր Տարւոյ առթիւ տեղի ունեցաւ մի ընկերական հանգէս Յուսիկոյ 3 ի Շարաթ գիւնը ուր ներկայ էին իբր 250 Հայեր , Հայերէն ազգային երգեր երգուեցան խիստ ընտիր ներ-

դաշնակութեամբ Պարոնայք Պոյաճեան , Տիօնեան , Ալիքսանեան , Մարաշեան , Սօլախեան և Չամալեանի կողմանէ : Սոյն հանդէսին մի հետաքրքրական մասն ալ էր մասնաւոր կարգադրութեամբ ներկայացուած Կենդանի—Պատկերները , որք գաղթական Հայոց ընկերական կենաց զանազան պարագայները ցոյց կուտային : Յանձնախումբն , որու նախագահն էր Մր . Հրանտ Քիրէճեան , հոգ տարած էր նաև հանդիսականաց պաղպաղակ , կարկանդակ և պտուղ ծառայելու :

— Նիւ Եորքի և շրջակայից Հայ Գաղթականութեան Ընդհանուր Ժողովն իւր սովորական նիստն ունեցաւ անցեալ Շարաթ գիւնը իսգըրն Սէրար սրահին մէջ ընդ նախագահութեամբ Մր . Օհանէս Տիօնեանի : Ներկայից թիւն էր իբր երեք հարիւր : Կիւլքարի ողբերգութիւնն չորս արարուածով ներկայացուեցաւ յատուկ պատրաստութեամբ , և այնչափ ազդու տպաւորութիւն մը ըրաւ ներկայից վրայ որ ժողովուրդը չի մեկնած , մօտ ապագային մէջ վերստին ներկայացումը խնդրեցին : Սոյն ժողովին մէջ հանգանակութիւն մը եղաւ Վարդանանց հանդէսը ըստ պատշաճին տօնելու համար , Որոշուեցաւ նաև ի Մարտի 1 հեռագրելով , Նոյն քաղաքի Արմէնեա լրագրի խմբագիր Պրն . Մկրտիչ Փորթուգալեանի անողնութեան վիճակի մասին ցաւակցութիւն յայտնել , ժողովքը ցրուեցաւ կէս գիշերն անցած , երկու շաբաթէն գուամարուելու պայմանաւ :

— Գաղթականութեան գրասենեակի Տեսուչ Գընըր Ուէպըր նամակ մը ընդունեցաւ առջի օր Օրէկօնէն Ուիլեմ Պըքըր անուն հողագործէ մը , որ Գընըրէն կը խնդրէր որ իրեն կին մը գտնէ :

Պըքըր կուգէ որ կինը Գերմանացի ըլլայ , քառասունէն մինչև քառասուն և հինգ տարեկան :

"The ARARAD"
No. 100 Centre Street, New York.
~~~~~  
ADVERTISING RATES.  

| Inches. | 1 Month. | 3 Months. | 1 Year. |
|---------|----------|-----------|---------|
| 1       | \$ 2.00  | \$ 5.00   | \$16.00 |
| 2       | 3.50     | 8.00      | 25.00   |
| 3       | 5.00     | 11.00     | 35.00   |
| 4       | 6.00     | 14.00     | 45.00   |
| 5       | 7.00     | 17.00     | 55.00   |
| 6       | 8.00     | 20.00     | 65.00   |
| 7       | 9.00     | 23.00     | 75.00   |
| 8       | 10.00    | 26.00     | 85.00   |
| 1 Col.  | 11.00    | 29.00     | 95.00   |
| 1 Col.  | 20.00    | 55.00     | 180.00  |

Per Line (Agate) 15 cents each issue.  
The above prices are for the first and last pages only. Ten per cent additional for the third page, next to reading matter.

**If YOU WISH**  
to Advertise  
Anything  
Anywhere  
AT Any time  
WRITE TO  
**GEO. P. ROWELL & Co.**  
No. 10 Spruce Street,  
NEW YORK.

Ա.ՉԴ

Հ . ԷյիմենՍն , Հայերէն միակ Տպագրիչ ի Միացեալ Նահանգս , պատիւ ունի ծանուցանել թէ յանձն կ'առնէ տպագրել ամէն տեսակ Հայերէն և Անգլ . գործ մեծ կամ փոքր քանակութեամբ : Տպագրութեան մաքրութիւնն և աժանութիւնն կարելի չէ գերազանցել . իւր նիւ եորքի մէջ ձուլել տուած Հայերէն ընտիր տառերն բաւական են մեծկակ հատորներ տպագրելու : Դրեք , տետր կամ ո' և է տպագրելի բան ունեցող ազգայնոց ուշադրութիւնն կը հրաւիրուի այս մասին :

**B. H. TASHJIAN & Co.,**  
100 Centre St.,  
New York.

BOOK AND PAMPHLET BINDERS  
CLOTH & PAPER BINDINGS,  
MAGAZINES,  
Reviews and Newspapers bound and mailed. Estimates furnished heerfully.

**Ս . ՕՀՈՆՆԷՍԵԱՆ .**  
Արեւելեան և Տեղական Նպարեղէններ .  
59 Ուաշինգթօն և 216 Էլտրիճ Փողոցք .

Սոյն խանութներու մէջ կը վաճառուի մասնաւոր խնամք և Պոլսէ բերուած Արեւելեան ամէն տեսակ Նպարեղէնք , Աղծեղէններ , ընտիր Պտուղներ , Ամերիկացոց ախորժեկի ու նուէրի արժանի Անուշեղէնք , զանազան բնորդ գիւնիներ ու օղիներ , նաև Տաճկական Գալապոյի առաջին կարգի Ժախիտէ շինուած սիկարէղէններ :

**Mrs. Winslow's**  
**Soothing Syrup.**  
ՏԻԿ . ՈՒԻՆՉԼՈՒ ՈՂՈՒԻԶ ՕՇԱՐԱԿԸ .  
Յիսուն տարիներէ աւելի է որ Տիկին Ուինզլօի Ուլաքիշ Օշարակը միլիոնաւոր մայրերի կը գործածուի իրենց դաւակայ ակուայ հանելու ժամանակ . Գիշերները կը խանգարուի քնը և հանգստութիւնն իր կը իրողովի ակուայ հանելու ցաւէ հիւանդ , տառապող և լացող զաւակէ մը : Եթէ այդպէս է , անմիջապէս Ակուայ Հանող Մանկանց համար «Տիկին Ուինզլօի Ողբիշ Օշարակ» էն չիւ մը առէք : Սորա արժէքը անհամար է . Խնդճ պըդտի տառապելալին անմիջապէս դարման մը պիտի ըլլայ : Մայրեր , աւսոր վրայ կրնաք ապուինիլ . բնաւ սխալ չի կայ : Կը բժշկէ Փորրօծութիւն , կը կանոնաւորէ Ստամոքսը և Աղիքները , կը բժշկէ Աղեաց Ուրթը , կը կակոցնէ Լինտերը , կը ներուազեցնէ բորբոքումն , և ամիողը կազմուծք կը կազդուրէ և կը զօրացունէ : Ակուայ հանող մանկանց համար «Տիկին Ուինզլօի Ողբիշ Օշարակը» , ճաշակեալ հաճելի , և Միացեալ Նահանգաց մէջ ամէնէն հին և ամենալաւ բժշկուհի և սնուցիչներէն մէկուն գեղազիւն է , և կը ծախուի աշխարհիս ամէն գեղազործներու ջով : Իւրաքանչիւր չիւ չի գինն է քսան և հինգ սենթ : Ուզեցէք միայն :

“ Mrs. Winslow's Soothing Syrup.,,